ՆՈՐ-ԴԱՐ

№ 19 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շորեքշաբթի, 31 Յունուարի 1901 Շորեքշաբթի, 31 Յունուարի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 19

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis, Redaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., երկրամեքի համար կրկնապատիկ։

ՄԱՐԻԱՄԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ
ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

յայտնում է ի գիտութիւն ծնողների եւ խնամակալների, որ դպրոցը մտնել ցանկացողների

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանակուած են փետրուարի 3-ին, 5-ին և 7-ին, առաւօտեան 9 ժամից սկսած։

Խնդրատուները կարող են դիմել դպրոցի տեսչին առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ, դպրոցի շինութեան մէջ։

(536) 3—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.— Կենսաթոշակի համար փոնդ։
Քրոնիկոն.— Լուրեր։
Մեզ գրում.—Նոր-Նախիջեւանից։ Դանձակից։ Լուգանսկից։
Կ. Պոլսի հայ թերթերից։
Թղթակցութիւններ.— Բագուից։
Ուսանողական սովորութիւնները Գերմանիայում։
Քաղաքական.— Ֆրանսիա։ Հին Նաստան։
Հեռագրներ։
Թեր և դէմ։
Բանասիրական.— Օտար կեանքից։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 30 յունուարի 1901 թ.

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՀԱՄԱՐ ՓՈՆԴ

—

Ներսիսեան հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան վերջերս նշանակած կենսաթոշակի առիթիւ խօսելով անցեալ համարներից մէկում («Նոր-Դար» № 17), նկատեցինք, որ Ներսիսեան դպրանոցին պատկանեալ գոյքի եկամուտից կամ դրամագլխի տոկոսից ամենևին իրաւունք չունի յիշեալ դպրանոցի հոգաբարձութիւնը մի որ և է աշխատաւորի համար կենսաթոշակ կապելու. ասացինք նոյնպէս, որ այժմեան դրութեամբ կենսաթոշակ նշանակուելով՝ կենսաթոշակ ստացողները կարող են մի օր զրկուել կենսաթոշակից։

Այն ինչ՝ եթէ յատկապէս կենսաթոշակները տալու համար մի առանձին դրամագլուխ կամ փոնդ լինէր նշանակուած, այն ժամանակ կենսաթոշակ ստացողները հաստատապէս կըստանային մինչև վերջն իրենց հասանելի թոշակը, և մեր դպրոցների արժանաւոր աշխատաւոր ուսուցիչները, մեր զրկանութեան, մանուկ ու չափահաս, առհասարակ զրողների գոյութիւնը մի չափով ապահոված կըլինէր, գոնէ այն հասակում և դէպքում, երբ նրանք այլևս անընդունակ են աշխատելու և իրենց աշխատանքով հոգալու իրենց ու իւրայինների ապրուստը։

Բայց որտեղից, ինչ աղբիւրներից կարելի պիտի լինէր կազմել ցանկալի փոնդը։

Պիտենք, որ հայոց դործչին, դրողին, մանկավարժին կենսաթոշակ է տրւում, և տուողը հոգևոր դպրանոցն է. թոշակ տալու հրամանն էլ Վեհափառ Կաթողիկոսն է արձակում։

Ուրեմն սկսենք հէնց հոգևոր դպրանոցից և եկեղեցուց։

Արդ, եթէ էջմիածնում մշակուի կենսաթոշակի համար դրամագլուխ կազմելու ծրագիրը և Ինքը՝ Վեհափառ Կաթողիկոսն այդ դրամագլխի հիմքը դնէ,— կարծում ենք, որ երկար ժամանակ չի տևիլ, և մենք կունենանք մի պատկառելի դրամագլուխ յիշեալ դեղեցիկ և օգտաւէտ նպատակի համար։

Այնուհետև կարելի էր ազգային եկեղեցական պանազան հաստատութիւնների եկամուտից որոշ ժամանակով բաժին հանել և այդ ամենը յատկացնել կազմուելիք փոնդին։

Եթէ Ներսիսեան հոգևոր դըպրանոցը պատահական որոշումներով կարող է դպրանոցի եկամուտից կենսաթոշակ նշանակել այս կամ այն գործչին,— ապա ինչու՞ կաթողիկոսական կոնդակով չը պիտի կարողանայ այդ հաստատութիւնն իւր տարեկան եկամուտից որոշ տարիների ընթացքում բաժին հանել կազմուելիք փոնդին։

Քամոյեանց եկեղեցու եկամուտից, պատահական ծխականների պատահական ցանկութեամբ, բաժին է հանւում այդ եկեղեցու և՛ քահանայի բժշկութեան, և՛ ուրիշ բանների համար. այդ եկամուտից բաժին է հանուել նոյնպէս այս կամ այն դպրոցին։ Մինչև կարելի չէը որոշ տարիների ընթացքում այդ եկեղեցու կալուածքի եկամուտի մի մասը յատկացնել յիշեալ փոնդին։

Կոնսիստորական չրջաբերականով շատ անգամ եկեղեցիների երէցփոխները պարտաւորւում են իրենց խնամքին յանձնուած եկեղեցիների եկամուտներից մաս և բաժին հանելու ապարդիւն ու անտեղի ծախքերի համար։ Մինչև չէը կարելի կարգադրել, որ եկեղեցիների եկամուտից բաժին հանուի, որոշ ժամանակով և չափով, կազմուելիք փոնդի համար։

Կարող ենք չարունակել, կարող ենք եկեղեցապատկան շատ եկամուտների մասին խօսել, որոնք ի զուր կորչում են։

Երբ այդպիսով փոնդի հիմքը դրուած կըլինի և որոշ կանոնադրութեամբ ապահովուած,— այն ժամանակ կըգտնուեն կտակողները և նուիրատուները՝ թէկուզ մէկ րուբլուց սկսած... և մի որոշ ժամանակից մենք կունենանք մեծ և մեր հասարակութեան ինքնաճանաչութեան պատիւ բերող դրամագլուխ։

Այնուհետև մեր մէջ դրողները, դպրոցին, մամուլին և գրականութեան ծառայողներն անապահով վիճակի մէջ չեն լինիլ, նոյն իսկ օրուայ ապրուստի կարօտ, և գրիչը ձեռքին հայ երիտասարդ հրապարակախօսը՝ յուսահատ և դառնութեան մէջ ընկած՝ չի անիծիլ այն կրակը, որ վառուել է նրա մէջ իւր ազգին ծառայելու սիրուց, սէր՝ որ պատճառում է նրան կեանքի դառնութիւն և վաղաժամ մահ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Թիֆլիսի Մարիամեան Յովնանեան աղջկանց դպրոցը նոր ծրագրով վերաբացւում է փետրուարի 13 ին։ Բացման ժամանակ հանդիսաւոր մաղթանք կըկատարուի, որին հատանաբար ներկայ կըլինի Վեհափառ Կաթողիկոսը։ Յարդ ընդունուած է 300-ից աւելի խնդիրք և դեռ նորանոր խնդիրքներ են ստացւում։ Ուսուցչական կազմը հետևեալն է. Յովհաննէս Յովհաննիսեան (տեսուչ), Ընտէն քահ. Բագրատունի և Արշակ քահ. Մինասեան, օր. օր. Մուրադեան, Խանդ Ղալամեան, Խանդամիրեան, Պատկանեան, Չմշկեան, Չահվերդեան, Ղարաջեան, Ջանջուղազեան, Զաւսլովսկայա, Բագրեան, Արէշեան, Ջալալեան, Առուանեան, Խուդադեան, տիկ. Նահապետեան, պ. Եկմալեան։

— Վեհափառ Կաթողիկոսի հրամանով, Գորու յաջորդ *Սահակ վարդապետ Տէր-Միքայէլեանը* տեղափոխւում է Նուխի նոյն պաշտօնով։

— Բագուի նահանգապետը յայտարարում է, որ *Սալիտակ* քաղաքի հրդեհի ժամանակ այրուած է մօտ ութ միլիոն պուդ մազութ ու նաւթ և վնասները հասնում են մի միլիոն երկու հարիւր հազար րուբլու։ Յարդ գտնուած է 10 դիակ, պեղումները չարունակւում են։ Այրուածքներ ստացողներից մեռել է 7 հոգի, մնացածներն առողջանում են։

— *Ծանտախի* դէմ կռուող Բարձրաբոյնս հաստատուած յանձնաժողովի որոշումով, հնարաւոր է համարուած այս տարի թոյլ տալ *մահմեդականների ուխտագնացութիւնը* դէպի Մէկքա և Մեդինա որոշ հիմունքներով, որոնց հետ ոստիկանութիւնը պիտի ծանօթացնի Ռուսիայում ապրող մահմեդականներին։

— Կիրակի, փետրուարի 4-ին, դերասանուհի ս. Մելիքեան Թիֆլիսի ժողովարանի դահլիճում ներկայացնելու է

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՕՏԱՐ ԿԵԱՆՔԻՑ

Յարօրինակ հասարակապետութիւն հասարակապետութեան մէջ.—Սենիլ Իոդս և նրա նըպատակը։

—

Ամեն տարօրինակ բան կարելի է սպասել Ամերիկայից։ Ահա մի տարօրինակ հասարակապետութիւն, որ հիմնուած է այդ մեծ հասարակապետութեան մէջ։ Այդ տարօրինակ հասարակապետութեան հիմնադիրն անուանւում է Ուիլիամ Ջորջ, որ իւր հասարակապետութիւնը հաստատել է 1895 թ. յուլիսի 10-ին։ Այդ հասարակապետութեան բոլոր անդամները մանկահասակներն են կազմում։ Սակայն դրա հիմնադրի գաղափարը վերին աստիճանի համակրելի է։ Ջորջը երկար ժամանակ զբաղուած էր այն մտքով, թէ ինչ միջոց կարելի է գտնել գնել, որպէսզի մանկահասակ յանցագործները կանոնաւոր խնամք վայելեն և կանոնաւոր կեանքի ընտելանալով հասարակութեան համար պիտանի անդամներ դառնան։ Եւ վերջ ի վերջոյ հասնում է այն եզրակացութեան, թէ ամենալաւ հնարը վերոյիշեալ տարօրինակ հասարակապետութեան հիմնելն է։ Դա վերաբերւում է միայն Նեու-Յորկին։

Հասարակապետութեան անդամները 6—18 տարեկան աղջիկներ ու տղերք են. նրանցից ամեն մէկն էլ մի որևիցէ յանցանքի համար է բռնուած. մէկը ջիրզիր է, մէկը՝ ձիու գող, մէկը՝ տուն կըտրող և այլն։ Հասարակապետութեան հողը բաղկացած է ընդ ամենը 400 դեսեատինից, որի վրայ կառուցուած է տասը հատ պարզ շէնք, որոնց մէջ են աղջկանց և տղերանց ջոկ-ջոկ բնակարանները, հասարակապետութեան չէնքը՝ իւր մատենադարանով ու խոհանոցով, պանդոկով ու հիւրանոցով, ուսումնարանը՝ դրամատնով ու մագաղիններով, կառավարչական շէնքն ու դատարանը, բանտը՝ նոյնպէս աղջկերանց և տղերանց համար ջոկ-ջոկ, պոստը, հիւանդանոցը, ամբարը, լուացարանն ու լոգարանը։ Բոլոր բնակիչների թիւը մօտ 90 է։

Սկզբում այդ հասարակապետութիւնն էլ հիմնուած էր բոլորովին նման Միացեալ-Նահանգների կազմակերպութեանը՝ —ունէին նախագահ, մինիստրներ, սենատ, պատգամաւորների ժողով և բարձրագոյն դատարան։ Այժմ այդ կազմակերպութիւնն աւելի պարզ է և կոնգրէսի տեղը բռնում են բոլոր անդամների պարբերական ընդհանուր ժողովները։ Նախագահը չարաչարական ստանում է մի րուբլի։ Ոստիկանութիւնը 1896 թ. 14 հոգուց էր բաղկացած, այժմ երկու հոգուց է։ Դրա փոխարէն զօրքի թիւն է աւելացրած, որ թմբկահարի ու զրօչակրի հետ 10 հոգուց է կազմուած։ Բոլոր պաշտօններն էլ ընտրութեամբ են լինում, ուստի և անխուսափելի կերպով կազմուած են նաև կուսակցութիւններ։ Ընտրողական իրաւունք ունին նաև աղջիկները, ինչպէս և տուրք են վճարում նրանք։ Բոլորն էլ հասկանում են, թէ ինչ նշանակութիւն ունի իրենց ձայնը ժողովների ժամանակ։ Այս կամ այն օրէնքի նպատակայարմար կամ աննպատակայարմար լինելը շատ շուտով զգալի է լինում, ուստի և շուտով էլ փոխում կամ բարեփոխում են այդ։ Այսպէս, օրինակ, օրէնք էր հրատարակուած, թէ ծխելն արգելւում է և յանցաւորը պատժի պիտի ենթարկուի։ Բայց տեսնելով, որ ծխելը գաղտնապէս շարունակւում է և ոչ մի հնար չկայ յանցաւորին բռնելու, խոկոյն փոխում են օրէնքն այն իմաստով, թէ պատժի են ենթարկւում ոչ թէ միայն ծնողները, այլ և նրանք, որոնց բերանից ծխախոտի հոտ կըգայ։ Եւ հասարակ պատիժները շատ խիստ են։ Արգելւած է նոյնպէս հասարակապետութիւնից փախչելը, փողով խաղեր սարքելը և օգելից խըմիչքներ գործածելը։ Բանտը բաժանուած է մանր վանդակաւոր խցերի։ Դրանց պատուհանները շատ բարձրից են. անկողինները կոշտ են, իսկ ուտելիքը՝ ամենապարզ տեսակ։ Այդ ամենքի չնորհիւ էլ բանտարկութիւնը խիստ զօրեղ ներգործութիւն ունի։ «Ձմարիտ որ աւելի ձեռնտու է լաւ մարդ լինելը, — ասում էր մի տղայ բանտից դուրս գալուց յետոյ.— մարդուս աշխատանքը լաւ վարձատրում են, կարելի է ամենապատուական հիւրանոցում քնել և ամենալաւ ճաշ էլ ուտել»։

Հասարակապետութեան անդամները փողն աշխատանքով են ձեռք բերում։ Նրանց մէջ կան երկրագործներ, հիւսներ և տնտեսներ։ Օրավարձը 1 ր.—1 ր. 50 կոպէկ է։ Աղջիկները սովորաբար տնտեսական գործերով են պարապում։ 12 տարեկանից փոքր մանուկներն յատուկ նշանակուած խնամակալներ ունին աշխատելու համար։ Աշխատութեան վարձը շարաթը մի անգամ է տրւում, և ով որ իւր սահացածը հէնց առաջին օրերն ուտէ, փչացնէ, նա պարտաւոր է պահել կոշտ անկողնու վրայ, իսկ ուտելիք էլ շատ քիչ են տալիս։ Օրէնքով աղքատների պետութեան հաշուով են պարելու։ Սակայն չուտով շատերը ծուլութիւնից դիմում են կառավարութեան օգնութեան։ Այդ բանը նկատելով նոր օրէնք հրատարակեցին, թէ ով որ չի աշխատում, նա էլ ուտելու իրաւունք չունի։ Միմիայն հիւանդներն ու աշխատելու անընդունակները ձրիաբար տոմսեր են ստանում ճաշ առնելու համար։

Հասարակապետութեան մէջ երեք պանդոկ կայ, որտեղ ծախում են բաժինը 10, 15 և 20 կ. ճաշ։ Բոլոր անդամներից կատարեալ մաքրութիւն է պահանջւում, որովհետև կեղտը հասարակական առողջութեան համար վնասակար է։ Օրէնքով պահանջւում է, որ իւրաքանչիւր անդամ շարաթն երկու անդամ լողանայ։

Հասարակապետութեան մէջ հրատարակւում է մի ամսագիր, որի խմբագիրը նոյնպէս մի երեխայ է։ Հասարակապետութեան անդամների կրթութիւնը յանձնուած է երկու ուսուցչի։ Ուսումնարան գնալը, ինչպէս և ամեն մի աշխատանք, վարձատրւում է։ Ուսումնարան գնալն սոիպղական է. փախչողներին կարգի հրաւիրելը յանձնուած է «պայ»-ի։

Ահա ուրեմն այն տարօրինակ հասարակապետութիւնը, որի անդամները մանկահասակ յանցագործներ են։ Թէ կանոնաւոր կեանքի ընտելանալով՝ ինչ օգուտ կըտան հասարակութեան, թէ ոչ, դեռ ասել չենք կարող։ Բայց ինչ որ էլ լինի, մեր կարծիքով, այդ հասարակապետութիւնը մեծ օգուտ կըտայ հասարակութեան, եթէ ոչ ուղղելով, գոնէ մեղմացնելով յանցագործների բնաւորութիւնը։ Ամեն դէպքում, այդ հասարակապետութիւնը մեծ ուշադրութեան արժանի է։

Ընդունելի «Մշակ»ի հրատարակած ի պատիւ պ. Ներսէս Տէր-Պետրոսեանց, յոբելեանական հանդէսի առթիւ յայտարարութիւն եւ ընդունելի Տիգրան Տէր-Մկրտչեանի նամակը։

Ընդունելի Ս. Ղազարեանի յօդուածը։

Ընդունելի Ս. Մանուկեանի յօդուածը։

Ընդունելի Ս. Ալիշանի յօդուածը։

Ընդունելի Ս. Ալիշանի նամակը։

Ընդունելի Ս. Ալիշանի յօդուածը։

Ընդունելի Ս. Ալիշանի յօդուածը։

Ընդունելի Ս. Ալիշանի յօդուած

ՄԻՋՈՑԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ն. Ն.

Ներկայումս Միացյալ Նահանգների դատական վարչության մասին հետաքրքրական տեղեկություններ է հրատարակել «Նոր Ժամանակ» թերթը, հետևյալ հոդվածում, որը մենք ներկայացնում ենք ընթերցողներին:

Ամերիկայում դատական գործերը վարվում են հետևյալ կարգով:

Նախ և առաջ, ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական կազմակերպությունը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական կազմակերպությունից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին օրենսդրությունը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների օրենսդրությունից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական պրակտիկան, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական պրակտիկայից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ընթացքը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ընթացքից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ծախսերը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ծախսերից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ժամկետները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ժամկետներից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուժը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուժից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական հարկերը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական հարկերից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական գործակալները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական գործակալներից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ամսագրերը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ամսագրերից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարաններից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական պլանները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական պլաններից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսուցիչները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսուցիչներից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների աշակերտները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների աշակերտներից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական ժամանակը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական ժամանակից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական ծախսերը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական ծախսերից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական հարկերը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական հարկերից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական գործակալները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական գործակալներից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական ամսագրերը, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական ամսագրերից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական ուսումնարանները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական ուսումնարաններից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական ուսուցիչները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական ուսուցիչներից: Ամեն մի նահանգ ունի իր առանձին դատական ուսումնարանների ուսումնական աշակերտները, որ ամենևին կախում չունի մյուս նահանգների դատական ուսումնարանների ուսումնական

հանջ էին տալիս Պլչևրի Լիդիտի թնդանօթների առաջ. նա ըստ կրսեց ռմբակոծել, որից յետոյ բոէքները չքացան։ Այնուհետև Կրիւսի զօրախումբը վերադարձաւ բանակը և հանգիստ առաւ մինչև կէսօր, ապա երեկոյին 200 բոէր, որոնք, ինչպէս յետոյ պարզուեց, ուզում էին զօրախումբը ծուղակը ձգել. այն բանից յետոյ, երբ անգլիացիները առաջ չարժուեցին, նրանց դէմ խիստ հրացանաձգութիւն սկսուեց երեք կողմից.անգլիական Մաքսիմի թնդանօթները անպէտքացան.տիպարած եղան ձգել այդ թնդանօթները, որոնց տանելու փորձ անելիս անգլիացիները մեծ կորուստներ ունեցան։ Բոէրները գերազանց ոյժերով անցան անգլիացիների քամակը, որոնք ստիպուած էին կռուելով նահանջ տալ դէպի բանակը, բայց ազատեցին պաշարակիր սայլերը։ Հետևեալ առաւօտ բոէրները նորից յարձակում գործեցին անգլիացիների վրայ, որոնք ստիպուած էին աւելի ևս նահանջ տալ, մինչև որ Իսրայէլսպորտի մօտ նրանց ազատեց Նորքի զօրախումբը։ Բոէրները, թուով 2,500 հոգի,գրաւում էին Դևէտի հրամանատարութեան տակ, մինչդեռ անգլիական զօրախումբը բաղկացած էր 700 հոգուց։ «Ռէյտերի Բիւրօն» այս տեղեկութեան առթիւ նկատում է, թէ այս ճակատամարտը, որի մասին ցարդ ոչինչ յայտնի չէր ոչ պաշտօնական, ոչ մասնաւոր հեռագրներից, հատանաբար մէկն է այն գործողութիւններից, որոնց շնորհիւ Դևետին աջողուեց անցնել բրիտանական զօրքերի միջից դէպի հարաւ Բլումֆոնտայնի և Լեդի Բրանդի միջև։

ԹԵՐԵԴԵՄ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I.

Յարգելի պ. խմբագիր,

Խնդրում եմ մի տեղ չնորհէք երկուդիս ձեր պատուական թերթի մէջ։ Պարոն և տիկին Ղազարեան մի-մի նամակ էին տպել «Նոր Դար»-ի № 6-ի մէջ, մեր մի թղթակցութեան դէմ(1900 թ.№ 226)։ Երբէք չպիտի պատասխանէի պարոնի գրածին, բայց զիջանելով չատերի խնդիրքին՝ պարզում եմ ահա իրողութիւնն ու ճշմարտութիւնը։

Անցեալ տարուայ նոյեմ. ամսի սկզբին տեղւոյս տպայոց դպրոցի աւագ ուսուցիչ պ. Սարգիս Անդրէասեանը գրաւոր կերպով հրաւիրել էր տեղւոյս երիտասարդներին՝ մասնակցելու տպայոց դպրոցի օգտին տրուելիք ներկայացմանը։ Բոլորը (16 հոգի), բացի պ. Ղազարեանից, ըստորագրեցին «կըզամ». իսկ պարոնն իւր անուան դիմաց գրել էր՝ «որովհետև նիւթականի խնդիր է, հոգաբարձութիւնը պէտք է դիմէ սիրողներին». մի խօսք, որ երբէք խնդրի հետ կապ չունի։ Ուրոշեալ օրն եկան բոլորն էլ, եկաւ նաև պարոնը։ Պ. Անդրէասեանն իրը նախագահ յայտնեց և բացատրեց դպրոցի նիւթական գրութիւնը և խնդրեց, որ բոլորն էլ մասնակցեն. բոլորը, բացի պ. Ղազարեանից, մատ բարձացրին, թէ «մասնակցում ենք»։ Որովհետև տիկին Ղազարեանը պէտք էր ներկայացմանը, հոգաբարձութիւնը դիմեց պարոնի հետ տիկնոջն ևս, սակայն երկուսն էլ մերժեցին և գրեցին, թէ պէտք է դիմել ուսուցիչներին, այն ինչ՝ հոգաբ. արդէն պաշտօնապէս դիմել էր տղայոց դպրոցի աւագ ուսուցչին և սա էլ օրինապէս վարուել էր հրաւիրելով թատերասէրներին։ Ասենք, թէ պարոնը տղայոց դպրոցի աւագ ուսուցչի հետ անձնական հաշիւներ ունի, բայց տիկինն ինչու մերժեց։

Պարոնը գրում է, թէ «ես չէի կարող գնդապետին անգիտակից մարդկանց հետ խաղալ»։ Մտածում ես—որպիսի մեծամտութիւն... Այո, բեմի վրայ ընկաւ մէկի քիթը, մէսի բելը, այդ է չնորհիւ իրեն՝ պ. Ղազարեանի, որովհետև պարոնը, որի մօտ պահւում են թատ. ընկ. գրիմմին վերաբերեալ նիւթերը, չյանձնեց թատերասէրներին։ Քթի և բելի ընկնելը պատահում է նոյն իսկ օրինաւոր բեմերի վրայ էլ, այդ չէ ծիծաղելին. թող պարոնը մի քիչ մարդավայել կերպով գրէը իր դիտողութիւնները։ Հասարակութիւնը մինչև վերջը մնաց և յայտնեց, թէ «այսպիսի յաջող ներկայացումն չէինք տեսել Ռաշտում»։ Պարոնն ասում է, թէ «ներկայացնողները պատանիներ էին» և ներկայացումն «օյինբազութիւն», չզգալով որ ինքն իրենն է մեղադրում։ Բոլոր մասնակցողներն երիտասարդներ էին 21 տ. մինչև 35 տ, իսկ մէկը միայն 18 տ. և դրանցից 4—5 ի հետ (նոյն իսկ 18 տ հետ) ինքը խաղացել է թէ անցեալ տարի և թէ այս տարի։ Առում է,թէ թատրոնի կէսը բռնուած էր պարսիկ և յոյն մարդկանցով. այստեղ էլ պարոնը ճիշտ չի խօսում։ Եկել էին միայն 4 յոյն իրենց կամքով, որով ետև թատրոն չվճարելով գալիս են մեր ներկայացումներին, և երկու պարսիկ, որոնցից մէկը Գիլանի նահանգապետի կողմից էր ուղարկուած. այդ մասին արդէն գրել էի անցեալ թղթակցութեանս մէջ։ Բացի այդ պարոնից, ոուսաց լեզուի ուսուցչից, որը յամառեց մասնակցել, և մի օգնվաճառից, միւսները բոլորն էլ մասնակցեցին. տիկ. Ղազարեանն էլ չուզեց հակառակել իր ամուսնու կամքին և նոյնպէս չմասնակցեց։ Եթէ տիկինը գրում է՝ «այդ ներկայացման մասնակցողներն անհամապատասխան են մեր ներկայութեանը», այդ նշանակում է անվայելուչ ակնարկները անել։

Պարոնն ուսուցչ. խումբ է գցել մէջ տեղ, այն ինչ՝ այդպիսի մարմին գոյութիւն չունի։ Տղայոց դպրոցն առանձին վարչութիւն ունի, ինչպէս և օրիորդաց. թէկ, ինչպէս օրէնքը պահանջում է, պէտք է երկու դպրոցներն էլ տղայոց դպրոցի աւագ ուսուցչի լիազորութիւնը ճանաչեն։ Սակայն թէ այս տարի խաղացել է բեմի վրայ։ Ընդհակառակն իւր բնաւորութեան չատացանք իրենից լրիւ թատրոնին վերաբերեալ պարագաները, և այո, թափուեցին երկու բեխերը, բայց դա պակասութիւն չէ, մենք վարձատրուած ենք համարում մեզ նրանով, որ հասարակութիւնն իւր միահամուռ քաջալերութեան և չնորհակալութեան ցոյցերով, թէ ներկայացման և թէ առանձին ժամանակ, խրախուսեց և գովեց մեր գործը։ Ինչ վերաբերում է տիկնոջ այն ակնարկին, թէ «մեր ներկայութիւնն անհամապատասխան էր իրեն», մենք չենք հասկանում, թէ ինչ է ուզում ըրանով հասկացնել տիկինը։

Երբ ինքը՝ պ. Ղազարեանը, մեղնից չատ յետոյ ներկայացում տուեց, ստիպուած եղաւ, բացի մէկից, երեք պարոնների բեմ բարձրացնել, որոնք երբէք բեմի երես չէին տեսել։ Մենք յարգում ենք նրանց, որոնք դպրոցների օգտին արուելիք ներկայացումներին մասնակցում են, բայց չենք կարող յարգել այն մարդկանց, որոնք անխիղճ կերպով զրպարտում են մեզ և իրողութիւնն աղաւաղում։ Ի զուր է աշխատում պարոնը մեր մէջ խռովութիւն սերմանել. եթէ այդ էլ պատահի, մենք անձնականը կզոհենք ընդհանուրի չահին։

Վերջացնելով մեր չատ կարճ նամակը, հրաւիրում ենք պարոնին ընկերական դատաստանի թող գայ և ապացուցէ մեր «օյինբազութիւնը»։ Այդ է պահանջում թէ մեր և թէ իւր պատիւը։

Ընդունեցէք մեր յարգանքները՝

Սարգիս Անդրէասեան, Ստեփան Յոզիկեան, Ա. Առաքելեանց, Քրիստափոր Մարգարեան, Վ. Չուքարեան, Մկրտիչ Խաչատրեանց, Ստեփան Յ. Առաքելեան, Ներսէս Ներսիսեանց (մի քանիսը միջոց չունեցան ստորագրելու)։

Ռաշտ, 22 յունուարի

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՆՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը)

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (չորեքշաբթի մի անգամ, չորեքշաբթի օրերը) 7 ժ. 56 ր. (8 ժ. 54 ր.) առ., հասնում է Բագու 9 ժ. (9 ժ. 58 ր.) երեկոյեան։

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 50 ր. (7 ժ. 48 ր.) առ., Թիֆլիս հասնում է 8 ժ. 12 ր. (9 ժ. 10 ր.) երեկոյեան։

Պոստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 11 ժ. 15 ր. (12 ժ. 13 ր.) երեկոյեան, Թիֆլիս հասնում է 5 ժ. 35 ր. (6 ժ. 33 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) երեկոյեան, Բաթում հասնում է 7 ժ. 10 ր. (8 ժ. 08 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 3 ժ. 5 ր. (4 ժ. 3 ր.) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 8 ժ. 23 ր. (9 ժ. 21 ր.) առ., Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 3 ր. (10 ժ. 1 ր.) առ., Բաթում հասնում է 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) երեկոյեան։

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 56 ր. (9 ժ. 54 ր.) առ., Թիֆլիս հասնում է 8 ժ. 42 ր. (9 ժ. 40 ր.) երեկոյեան։

Թիֆլիսից Բագու մեկնում է 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.) երեկոյեան, Բագու հասնում է 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 47 ր. (11 ժ. 45 ր.) երեկոյեան, Թիֆլիս հասնում է 11 ժ. 18 ր. (12 ժ. 16 ր.) առ., Թիֆլիսից Բագու մեկնում է 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.) ցերեկուայ, Բագու հասնում է 7 ժ. (7 ժ. 58 ր.) առ.։

Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) երեկոյեան, հասնում է Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.) առ., Ալէքսանդրապոլ—8 ժ. 27 ր. (9 ժ. 25 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ. 21 ր.) ցերեկուայ։

Կարսից մեկնում է 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.) ցերեկուայ, հասնում է Ալէքսանդրապոլ—7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.) երեկոյեան, Ղարաքիլիսա—11 ժ. (11 ժ. 58 ր.) գիշերուայ, Թիֆլիս—6 ժ. 15 ր. (7 ժ. 13 ր.)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ

Պատկերազարդ

ՓՐԱՆՍԱՀԱՅ

Ամբողջ երկասիրութիւնն երկու հատորից է բաղկանում։ Առաջին հատորը (A—H) արդէն լոյս է տեսել և արժէ 25 ֆրանք։ Երկրորդ հատորը, որը կըծախսուի նոյնպէս 25 ֆր.։

Այդ աշխատութիւնն ստանալու համար պիտի դիմել հեղինակին, 108, Avenue de Neuilly, à Neuilly sur/Seine, և կամ Կոստանդնուպոլիս, Ղալաթիա, Սեղբոս խան, թիւ 5, Բիւզանդեան դրատուն։

(530) 3—3

Վաճառում է
«ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԳՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԱՆ ՄԱՍԻՆ»
Գիրքը
(Մեծ պատի ամեն մի օրուայ համար քարոզները)
Թիֆլիս, Դաբրիէլ քահ. Տեր-Դաբրիէլեանց 3—3
(530)

Բարձր դասակարգի կանայք ինչպէս և գեղեցկութեամբ տժնանը, չանաւոր պերասանուհիները հրաժարուեցին գործածել ԿՈՃՂ ԿՐԵՄ (Cold Creme), որ դառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրանք գործ են ածում

CREME SIMON

(Կրեմ-Սիմօն) գեղեցիկ հոտ ունեցող լատագրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի չնորհալութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։

LA POUDRE SIMON

Պուդր Սիմոն) La savon à la Creme Simon (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները։

J. SIMON, 13 rue Grande Batelière. Paris. Մաս-մաս վաճառում է վարսավէրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ։

(M) № 146179. 18—19

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

*այտարարում է իւր պիտութիւն քաղաքային ջրանցքի ալ. ապ[ա]
նենտների, որ ջրից օգտուելու համար իրենցից հասանելիք վճարման վերաբերմամբ այսուհետև առանձին ծանուցագրեր չի ուղարկուիլ, այլ քաղաքային վարչութիւնը կըբաւականանայ ուղարկելով հաշիւները, որոնց միւս երեսում տպագրուած կըլինի ջրից օգտուելու կանոնները, և այդ հաշիւներով աբոնենտները պարտաւոր կըլինին քաղաքի կասսան մտցնել ջրի վճարը 15 օրուայ ընթացքում հաշուած հաշուեվճռուելին ստանալու օրից, որպիսի ժամանակամիջոցը լրանալուց յետոյ անկանոն վճարողներին ջրի մատակարարումը կըդադրեցնուի։*

Կ Ի պիտութիւն նոյն աբոնենտների հաղորդում է, թէ, որպէսզի դանդաղում չլինի ջրաչափի ցուցումները վերցնելիս, կանուխ լուսաբերը պէտք է ազատ մուտք ունենան դէպի ջրանցքի լիւկը որտեղ դրուած են ջրաչափները։

(532) 3—2

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕНЦЕРЪ

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая ариѳметика 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ 1-го числа

(480) Годъ занятій одиннадцатый 100—18

Дозв. цензурою. Тифлисъ, Января 30-го дня 1901 г.

ТРЕБУЙТЕ ВЕЗДЪ ШОКОЛАДЪ СІУ ФАБР. С. С. СІУ и К° МОСКВА.

(М.) № 90634 52—34

РОЗОВОЕ ХРУСТАЛЬНОЕ МЫЛО № 4711

Поставщика Двора Его Императорскаго Величества

ФЕРД. МЮЛЬГЕНСЪ

КОЛОКОЛЬНАЯ №4711 ВЪ КЕЛЬНѢ и РЕЙНѢ

Высокое содержаніе глицерина, экономія вслѣдствіе обилія пѣны, нѣжный запахъ розы

ватъ качества, отличающія это мыло въ высокой степени.

(M.) 1. 24

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ

Ծախւում են գործածուած,նոր և բոլորովին դուրս կանգնած կահկարասիք, տուն կահաւորելու իրեր, բրոնձ, սաքը, ոսկի, թանկագին քարեր։ Москва, Неглинный проѣздъ, пассажъ Солодовникова рядомъ съ Абрикосовымъ։ *Մոսկուա, Սոլոդովնիկովի պասսաժ*

(M) №8514 *մուտքը նեգլինից։* 23—1

Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ 387